

ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ԱՄԻՐՅԱՆ

Ծնվել է 1962թ. հունվարի 23-ին Երևանում: 1969-1979 թթ. սովորել է Երևանի թիվ 100 միջնակարգ դպրոցում:

1979-1983թթ. սովորել է Երևանի «Առևտրի և արդյունաբերական» տեխնիկումում:

1984-1989թթ. սովորել է Վորոնեժի տնտեսագիտական ինստիտուտում:

2004-2009թթ. սովորել է Երևանի «Գալիք» համալսարանում:

2000 թվականից «Դդեր գրուպ» ՍՊԸ-ի հիմնադիրն ու նախագահն է:

1989-1994թթ. մասնակցել է Արցախյան պատերազմին, որի համար ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Հայոց Արծիվ», «Ազատագրում» շքանշաններով:

2006-2008թթ. ընտրվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Աջափնյակի տարածքային խորհրդի նախագահ:

2008թ.-ից «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Աջափնյակի տարածքային խորհրդի անդամ է:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

